



C-Quadrat Ampega
Asset Management
Armenia


2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբեր 2024թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		01.10.24- 31.12.24	01.01.24- 31.12.24	01.10.23- 31.12.23	01.01.23- 31.12.23
Կառավարման վճարներից եկամուտ	4	1,217,977	4,427,913	1,030,180	3,713,490
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	7,003	25,188	5,427	17,841
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ կամ վնաս	6	27,901	203,403	109,292	260,839
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4,7	1,065	2,455	322	1,580
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(72,426)	(275,179)	(72,021)	(287,419)
Գործառնական այլ եկամուտներ	7	-	271	-	214
Արտարժույթային գործառնություններից զուտ վնաս	6	(6,845)	(13,829)	(3,232)	(8,841)
Արտարժույթի փոխարժեքի տատանումներից օգուտ /(վնաս)	6	(30,868)	(79,973)	40,795	54,237
Ֆինանսական ծախսեր	3	(3,140)	(13,675)	(3,911)	(16,539)
Վարչական և այլ ծախսեր	9,10	(665,121)	(1,903,371)	(592,225)	(1,592,269)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		475,547	2,373,203	514,627	2,143,133
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	12	89,181	424,817	86,569	353,772
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		386,365	1,948,387	428,059	1,789,361
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-
Այլ համապարփակ եկամուտներ		-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		386,365	1,948,387	428,059	1,789,361



Արման Վարդանյան
 Գլխավոր գործադիր տնօրեն

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
 Արթուր Հարությունյան
 Գլխավոր հաշվապահ


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբեր 2024թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		31/12/24	31/12/23
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	1,222,159	895,691
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	15	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	16	1,816,056	2,227,654
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	17	-	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	18	-	-
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	19	-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	90,318	113,458
Օգտագործման իրավունքով ակտիվներ	20.1	99,255	132,295
Հետաձգված հարկային ակտիվներ	21	38,838	30,617
Այլ ակտիվներ	22	516,181	436,173
Ընդամենը՝ ակտիվներ		3,782,807	3,835,888
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	-	-
«Իական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՀԿԿ) չափվող ֆինանսական պարտավորություններ	25	-	-
Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր	26	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	27	-	-
Վարձակալության պարտավորություն	20.1	111,237	141,608
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտքեր	29	433,443	362,156
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր	28, 29	429,751	372,136
Ընդամենը՝ պարտավորություններ		974,431	875,900
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	30	650,000	650,000
Էմիսիոն եկամուտ		-	-
Պահուստներ՝		-	-
Գլխավոր պահուստ		-	-
Վերագնահատման պահուստներ		-	-
Զբաղիված շահույթ (վնաս)	33	2,158,376	2,309,988
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	-
Ընդամենը՝ սեփական կապիտալ		2,808,376	2,959,988
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		3,782,807	3,835,888

Արման Վարդանյան
 Գլխավոր գործադիր տնօրեն

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
 Արթուր Հարությունյան
 Գլխավոր հաշվապահ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբեր 2024թ.

հազար դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ/վնաս	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը կապիտալ
Նախորդ համադրելի միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)						
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2023թ.	650,000	-	-	1,473,627	-	2,123,627
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	650,000	-	-	1,473,627	-	2,123,627
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-	-	-
4. Համապարփակ եկամուտ	-	-	-	1,789,361	-	1,789,361
5. Շահութաբաժիններ	-	-	-	(953,000)	-	(953,000)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)	-	-	-	-	-	-
7. Ներքին շարժեր	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբեր 2023թ.	650,000	-	-	2,309,988	-	2,959,988
9. Մնացորդը հաշվելու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2024թ.						
9.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-
10. Վերահաշվարկված մնացորդը	650,000	-	-	2,309,989	-	2,959,989
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-	-	-
12. Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,948,387	-	1,948,387
13. Շահութաբաժիններ	-	-	-	(2,100,000)	-	(2,100,000)
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր	-	-	-	-	-	-
16. Մնացորդը հաշվելու ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբեր 2024թ.	650,000	-	-	2,158,376	-	2,808,376

Արման Վարդանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
 Արթուր Հարությունյան
 Գլխավոր հաշվապահ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
31 դեկտեմբեր 2024թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	01.01.24-31.12.24	01.01.23-31.12.23
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված կառավարման վճարներ	4,381,913	3,612,954
Միջնորդավճարների գծով այլ եկամուտներ	2,455	1,580
Ստացված տոկոսներ	22,128	13,731
Աշխատավարձի և նմանատիպ ծախսերի վճարում	(524,282)	(463,364)
Վճարված կոմիսիոն ծախսեր	(270,832)	(283,664)
Արտարժույթային գործառնություններ	(13,829)	(8,841)
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)		
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(1,274,698)	(927,124)
Կանխավճարներ հիմնական միջոցներ ձեռքբերման նպատակով		-
Վճարված շահութահարկ	(378,285)	(270,922)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)	(273,750)	(20,853)
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		
Բանկերում տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(273,750)	(20,853)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	1,670,821	1,653,497
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ներդրումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում	(485,000)	(530,000)
Մուտքեր իրական արժեքով ՇՎ միջոցով չափվող ֆինանսական ակտիվների օտարումից/մարումից	1,100,001	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(9,934)	(14,481)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	605,067	(544,481)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ	(2,100,000)	(953,000)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		
Վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)	(44,045)	(42,951)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	-	(15,000)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	(2,144,045)	(1,010,951)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,826	15,002
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	133,668	113,066
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	129,657	16,591
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	263,325	129,657

Արման Վարդանյան

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր
 ներկայացուցիչ Արթուր Հարությունյան

Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն ստեղծվել է 2013թ. նոյեմբերի 29-ին, և գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել թիվ 3 լիցենզիան:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում մասնակիցների ընդհանուր ժողովը, դիտորդ խորհուրդը և գլխավոր գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Արման Վարդանյանը:

Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարման լիցենզիայով և թույլտվությամբ նախատեսված գործունեություն:

Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Ընկերությունն ունի խորհուրդ, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով Ընկերության կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության մասնակիցներն են հանդիսանում «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ» Ընկերությունը, որը գրանցված է Վիեննայում, Ստոլբենիցի 2 հասցեով, գրանցման համար FN

55148a և «Տալանքս Ասետ Մենեջմենթ» ՍՊԸ-ն, որը գրանցված է Շարլ-դե-գոլ փլայթ 1, Գերմանիա 50679 Քյոլն հասցեով, գրանցման համար HRB 61047:

Ընկերության հասցեն է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փող. 37:

Ընկերությունը իրականացնում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված երեք՝

1. Հավասարակշռված,

2. Պահպանողական և

3. Կայուն եկամտային ֆոնդերի կառավարում, որոնց մանրամասն նկարագրությունը ներկայացված է ֆոնդի կանոններով:

2019թ.-ից սկսած ընկերությունը իրականացնում է նաև Ցե-Քյու Արմենիա Գրուպ ներդրումային ֆոնդի կառավարումը, ինչպես նաև 2023թ. սկսած իրականացնում է Ցե-Կվադրատ

Ամպեգա Սոցիալական ֆոնդի կառավարումը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2025թ. հունվարի 27-ին Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Արման Վարդանյանի և «Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ Արթուր Հարությունյանի կողմից:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող՝ ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

2.5 Հաշվանցում

**«Ցե-Կվարտար Անպեզա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ 2022
թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյակի
ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ**

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

2.6 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Դեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշառյին արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին:

2.7 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հողվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

բ) Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը, բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

գ) Ակտիվների կառավարման գործունեություն

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային հիմնադրամների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունը նաև վաստակում է ակտիվների կառավարման վճարներ խորհրդատվական լուծումներ առաջադրելիս, որոնք ներառում են խորհրդատվական և հաշիվների կառավարման ծառայություններ: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական

վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

դ) Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

ե) Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱԿՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱԿՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

**«Ցե-Կվարտար Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ 2022
թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյակի
ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ**

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» է այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՀԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես

անելը վերացնում կամ նաշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ: Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՀԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՀԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՀԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատրային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասորդի (պայմանագրի համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հաքերի միջև տարբերություններ, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,

բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Ֆինանսական ակտիվների ապահանջումը. Ընկերությունն ապահանջում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատուցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատուցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատուցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՀԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՀԿՎ ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՀԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական

պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՀԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետզնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՀԿՎ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և

խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՀԿՎ չափվող:

ԻԱՀԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

**«Ցե-Կվարտար Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ 2022
թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյակի
ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ**

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

